



Նաիրի Ինշուրանս  
Ապահովագրական ընկերություն

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է  
«ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍՊԸ  
Խորհրդի 19.06.2014թ. թիվ 23 որոշմամբ

## ԲԵՌՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

(Ակտիվի դաս՝ Հրապարակային)



**ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

- 1.1. Բեռների ապահովագրության պայմանները (այսուհետ՝ Պայմաններ) մշակված են համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք), այլ իրավական ակտերի (միասին այսուհետ՝ ՀՀ օրենսդրություն):
- 1.2. «ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերությունը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից տրված թիվ 0006 (0009) լիցենզիայի հիման վրա իրականացնում է «Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն» դասի ապահովագրություն՝ սույն Պայմանների հիման վրա կնքելով Բեռների ապահովագրության պայմանագիր կամ վկայագիր:

**ԲԱԺԻՆ 2. ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

- 2.1. **Ապահովագրող**՝ «ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍՊԸ.
- 2.2. **Ապահովադիր**՝ Ապահովագրողի հետ ապահովագրության պայմանագիր կամ վկայագիր կնքած անձ.
- 2.3. **Պայմանագիր**՝ սույն Պայմանների հիման վրա կնքված ապահովագրության պայմանագիր կամ վկայագիր.
- 2.4. **Շահառու**՝ ապահովագրական պատահար տեղի ունենալու պարագայում Պայմանագրով նախատեսված ապահովագրական հատուցում ստանալու իրավունք ունեցող անձ, ով ապահովագրված գույքի (բեռի) նկատմամբ ունի գույքային շահ.
- 2.5. **Շահագրգիռ անձ**՝ Ապահովադիրը, Շահառուն կամ նրանց ներկայացուցիչները, վերջիններիս հետ բեռի փոխադրման հետ կապված պայմանագրային (այդ թվում՝ աշխատանքային, ծառայությունների մատուցման, բեռնափոխադրման, տրանսպորտային առաքման և այլն) հարաբերությունների մեջ գտնվող ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ.
- 2.6. **Բեռ (փոխադրվող գույք)**՝ Պայմանագրում նշված՝ տարածության մեջ տեղափոխման համար նախատեսված գույք.
- 2.7. **Բեռնափոխադրում**՝ Բեռի տեղափոխում ցանկացած փոխադրամիջոցի օգնությամբ.
- 2.8. **Աբանդոն**՝ Ապահովադիրի՝ ապահովագրության օբյեկտի նկատմամբ իր իրավունքից հրաժարումն ի օգուտ Ապահովագրողի՝ նպատակ հետապնդելով որպես հատուցում ստանալ ողջ Ապահովագրական գումարը.
- 2.9. **Ապահովագրական գումար**՝ Ապահովագրողի կողմից վճարման ենթակա հնարավոր ապահովագրական հատուցման առավելագույն չափ.
- 2.10. **Ապահովագրական սակագին**՝ Ապահովագրական գումարի նկատմամբ ապահովագրավճարի դրույքաչափ տոկոսային արտահայտությամբ.
- 2.11. **Ապահովագրավճար**՝ Պայմանագրով սահմանված չափով Ապահովադիրի կողմից Ապահովագրողին հնարավոր ապահովագրական հատուցման դիմաց վճարվելիք գումար.
- 2.12. **Ապահովագրական պատահար**՝ Պայմանագրի գործողության ընթացքում Պայմանագրով նախատեսված դեպք կամ իրադարձություն, որի տեղի ունենալը կրում է հավանական, անսպասելի և (կամ) պատահական բնույթ և որի տեղի ունենալու պարագայում Ապահովագրողը պարտավորվում է Ապահովադիրին կամ Շահառուին վճարել ապահովագրական հատուցում.
- 2.13. **Չհատուցվող գումար (ֆրանշիզա)**՝ Ապահովադիրի մասնակցության չափը վնասի հատուցմանը (վնասի վերականգնմանը), որը սահմանվում է Պայմանագրով՝ կոնկրետ գումարի կամ Ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսի տեսքով: Պայմանագրով կարող է սահմանվել պայմանական կամ ոչ պայմանական չհատուցվող գումար.
  - 2.13.1. Պայմանագրում պայմանական չհատուցվող գումար սահմանված լինելու դեպքում Ապահովագրողն ազատվում է փաստացի վնասների կամ կորուստների հատուցման պարտականությունից, եթե այդ վնասի չափը չի գերազանցում Պայմանագրով սահմանված չհատուցվող գումարի չափը, և պարտավոր է վճարել ապահովագրական հատուցումն ամբողջությամբ, եթե դրա մեծությունը գերազանցում է չհատուցվող գումարի չափը:



2.13.2. Պայմանագրում ոչ պայմանական չհատուցվող գումար սահմանված լինելու դեպքում Ապահովագրողն ազատվում է Պայմանագրով սահմանված ոչ պայմանական չհատուցվող գումարի մասով հատուցում իրականացնելուց՝ անկախ վնասի և կորստի չափից:

**ԲԱԺԻՆ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ**

- 3.1. Ապահովագրության օբյեկտն Ապահովադրի (Շահառուի)՝ ՀՀ օրենսդրությանը չհակասող գույքային շահերն են՝ կապված Բեռի տնօրինման, տիրապետման և (կամ) շահագործման հետ:
- 3.2. Ապահովագրության ենթակա է Ապահովադրին (Շահառուին) սեփականության իրավունքով պատկանող կամ վարձակալությամբ վերցված և ի պահ հանձնված գույքը բոլոր տեսակի տրանսպորտային միջոցներով (այդ թվում՝ երկաթուղային, օդային, ցամաքային և ծովային) տեղափոխման ընթացքում կամ պահեստավորված վիճակում:

**ԲԱԺԻՆ 4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ ԵՎ ՌԻՍԿԵՐ**

- 4.1. Պայմանագրով հատուցվում է Բեռին հասցված այն վնասը, որն առաջացել է Բեռի փոխադրման ընթացքում Ապահովագրական պատահարի հետևանքով:
- 4.2. Բեռների ապահովագրությունը կարող է իրականացվել հետևյալ պատահարներից (ռիսկային խմբերից)՝
  - 4.2.1. **Ռիսկային խումբ Ա՝ «Պատասխանատվություն բոլոր ռիսկերի համար»:** Պայմանագրում այս ռիսկային խումբը նախատեսված լինելու դեպքում Ապահովագրական պատահար են համարվում ամբողջ Բեռի կամ դրա մի մասի ցանկացած պատճառով տեղի ունեցած և պատահական բնույթ կրող ոչնչացումը կամ վնասը՝ բացառությամբ Պայմանների Բաժին 5-ում թվարկված դեպքերի:
  - 4.2.2. **Ռիսկային խումբ Բ՝ «Պատասխանատվություն մասնակի ռիսկերի համար»:** Պայմանագրում այս ռիսկային խումբը նախատեսված լինելու դեպքում Ապահովագրական պատահար են համարվում ամբողջ Բեռի կամ դրա մի մասի ոչնչացումը կամ վնասը, որոնք հետևանք են՝
    - 4.2.2.1. հրդեհի կամ պայթյունի,
    - 4.2.2.2. նավի խորտակման, շուռ գալու, ծանծաղուտի վրա նստելու, ավի դուրս գցվելու,
    - 4.2.2.3. տրանսպորտային միջոցի հետ տեղի ունեցած վթարի և (կամ) բեռնատար տրանսպորտային միջոցների և երկաթուղային վագոնների բախման կամ շրջման, դրանց եկաթգծից դուրս գալու,
    - 4.2.2.4. օդային փոխադրամիջոցների (թռչող ապարատների) վթարի,
    - 4.2.2.5. չնախատեսված վայրում (օդանավակայանում, ապաստարանում)՝ հատուկ պայմաններում բեռնաթափման,
    - 4.2.2.6. կայծակնահարության, երկրաշարժի, հրաբխի, ջրհեղեղի, ցունամիի, մրրիկի, փոթորկի կամ այլ բնական (տարերային) աղետների,
    - 4.2.2.7. ընդհանուր վթարի և փրկման աշխատանքների դեպքում Բեռի զոհաբերման, հրդեհի մարման ժամանակ Բեռի խոնավացման,
    - 4.2.2.8. նավի մեջ ջրի հանկարծակի ներթափանցման և դրա հետևանքով նավամբարում կամ տախտակամածի փակ բեռնարկղում գտնվող Բեռի խոնավացման (թրջման),
    - 4.2.2.9. բեռնման, տեղավորման, բեռնաթափման և փոխադրամիջոցի վառելիքով լցավորման հետևանքով բեռի վնասման:
  - 4.2.3. **Ռիսկային խումբ Գ՝ «Պատասխանատվություն ամբողջ Բեռի կամ դրա մի մասի կորստի կամ ոչնչացման համար՝ առանց վնասների համար պատասխանատվության»:** Պայմանագրում այս ռիսկային խումբը նախատեսված լինելու դեպքում Ապահովագրական պատահար են համարվում ամբողջ Բեռի կամ դրա մի մասի ամբողջական ոչնչացումը, որն արդյունք է Պայմանների 4.2.2.1-4.2.2.9 ենթակետերում թվարկված դեպքերի (հատուցման ենթակա չէ ամբողջ Բեռին կամ դրա մի մասին պատճառված վնասը):
  - 4.2.4. Բեռների փոխադրման (պահեստավորման) հետևանքով երրորդ անձանց հասցված հնարավոր վնասների համար Ապահովագրողը պատասխանատվություն չի կրում, եթե դա նախատեսված չէ Պայմանագրում:



**ԲԱԺԻՆ 5. ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

- 5.1. *Ապահովագրական պատահար չի հանդիսանում և Ապահովագրողը չի հատուցում ամբողջ Բեռի կամ դրա մի մասի ոչնչացումը կամ վնասը, որը հետևանք է՝*
  - 5.1.1. *Շահագրգիռ անձի դիտավորության կամ անզգուշության, ինչպես նաև Շահագրգիռ անձի կողմից Բեռի փոխադրման, առաքման և պահպանման սահմանված կարգերի խախտման,*
  - 5.1.2. *Պայմանագրում նշված բեռնափոխադրման երթուղուց շեղման, ինչպես նաև բեռնափոխադրման ճանապարհից շեղման, բացառությամբ եթե բեռնափոխադրման ճանապարհից շեղումն իրականացվել է հարկադրաբար,*
  - 5.1.3. *Բեռի ոչ ճիշտ, թերություններով կամ սահմանված նորմատիվների խախտմամբ փաթեթավորման, արդեն վնասված և տեղափոխման ոչ ենթակա վիճակում Բեռների առաքման,*
  - 5.1.4. *Բեռի բնական հատկանիշների կամ ներքին թերությունների (քիմիական փոփոխություններ, բնական հոսակորուստ, ներքին փչացում, չորացում, փտում, նեխում և այլն), Բեռի քաշի կամ ծավալի նորմատիվային կորստի կամ նորմատիվային մաշվածքի,*
  - 5.1.5. *Բեռի բնական վիճակի այնպիսի փոփոխության, որը հանգեցրել է Բեռի արտաքին տեսքի փոփոխությանը (բացառությամբ արտաքին ներգործության),*
  - 5.1.6. *միջատների, կրծողների, որդերի գործողությունների,*
  - 5.1.7. *բորբոսի կամ սնկերի հետևանքով հասցված վնասի,*
  - 5.1.8. *Բեռի պայմանագրով նշված առաքման ժամկետից ուշացման, Բեռի տեղ հասցնելու ուշացման հետևանքով գների անկման (եթե նույնիսկ այդ ուշացումը տեղի է ունեցել Ապահովագրական պատահարի հետևանքով),*
  - 5.1.9. *Բեռի անվտանգ փոխադրման համար անհրաժեշտ պիտանելիություն չունեցող և միջազգային ստանդարտներով սահմանված չափանիշներին չհամապատասխանող տրանսպորտային միջոցով փոխադրման,*
  - 5.1.10. *Բեռի արտաքին փաթեթավորման պահպանման, կապարակնիքների անվնասության, Բեռին դիպչելուն ուղղված կամ Բեռին հասցված վնասի հետքերի բացակայության պայմաններում Բեռի պակասորդի կամ վնասի, Բեռի արտադրական թերության,*
  - 5.1.11. *կեղտոտման, տարայի փչացման կամ տեխնիկական փաստաթղթերի փաթեթավորման վնասի կամ կորստի հետևանքով Բեռի արժեզրկման, երբ Բեռը մնում է ամբողջական,*
  - 5.1.12. *շրջակա միջավայրի ջերմաստիճանի, ջրի ազդեցության (բացառությամբ պատահարի հետևանքով տրանսպորտային միջոցի խորտակման),*
  - 5.1.13. *երրորդ անձանց կողմից Բեռի խարդախորեն յուրացման, գողության և (կամ) անբացատրելի պակասորդի, բացառությամբ այն դեպքերի, երբ կապացուցվի, որ նման պակասորդն ի հայտ է եկել բռնի և (կամ) հարկադրաբար տրանսպորտային միջոց ներխուժելու հետևանքով, Ապահովագրողի կամ բեռնափոխադրողի անվճարունակության կամ նրանց ֆինանսական պարտավորությունների չկատարման,*
  - 5.1.14. *պատերազմի, ռազմական գործողության, քաղաքացիական պատերազմի, ապստամբության, գործադուլի, խռովության, ահաբեկչության կամ դրանց հետևանքով առաջացած անկարգությունների (այդ թվում նաև փողոցային), ցանկացած թշնամական գործողության կամ քաղաքական մոտիվներով առաջնորդվող ցանկացած անձի գործողության,*
  - 5.1.15. *պետական կամ կառավարական մարմինների կողմից իրականացված բռնագրավման, բռնազանձման, կալանքի, տեղափոխման արգելքի, կալանավորման, դրանց հետևանքների կամ այդպիսի գործողությունների ցանկացած փորձի,*
  - 5.1.16. *ռադիոակտիվ ազդեցության (վարակման), արտանետումների, ճառագայթման կամ ցանկացած զենքի օգտագործման, որը պայմանավորված է ատոմային կամ միջուկային տրոհմամբ, սինթեզմամբ, նմանատիպ այլ ռեակցիաներով,*
  - 5.1.17. *անուշադրության մատնված ականների, ստորջրյա ինքնաշարժ ականների կամ պատերազմից հետո մոռացված զենքերի և (կամ) զինամթերքների ներգործության:*



- 5.2. *Ապահովագրողը չի իրականացնում ապահովագրական հատուցում, եթե՝*
  - 5.2.1. *Ապահովագրական պատահարից հետո պարզվում է, որ Պայմանագիրը կնքելիս կամ դրանից հետո Ապահովադիրը Ապահովագրողին հայտնել է կեղծ տեղեկատվություն կամ չի հայտնել ռիսկի աստիճանի վրա ազդող իրեն հայտնի տեղեկություններ,*
  - 5.2.2. *Ապահովադիրը (Շահառուն) չէն իրականացրել պատահարի հետևանքով առաջացած վնասի նվազեցմանն ուղղված միջոցառումներ (այդ գործողություններն չիրականացնելու հետևանքով առաջացած վնասների չափով),*
  - 5.2.3. *Ապահովադիր կամ Շահառուի կողմից իրականացվել են պատահարի առաջացմանն ուղղված կանխամտածված գործողություններ (անգործություն),*
  - 5.2.4. *Պայմաններով, Պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:*

**ԲԱԺԻՆ 6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՐԺԵՔ**

- 6.1. Բեռի ապահովագրական արժեք է համարվում Պայմանագրի կնքման պահին տվյալ Բեռի իրական (շուկայական) արժեքը: Պայմանագրով նախատեսված դեպքերում Բեռի իրական արժեքի մեջ կարող են ներառվել՝
  - ա) միջանկյալ ծախսեր Բեռի արժեքի 10%-20%-ի չափով (օրինակ՝ պահպանման, բեռնման, բեռնաթափման, մաքսագերծման լրացուցիչ ծախսեր և այլն),
  - բ) Բեռի փոխադրման տրանսպորտային ծախսեր:
- 6.2. Բեռի իրական (շուկայական) արժեքը՝ ներառյալ միջանկյալ ծախսերը, հաստատվում են համապատասխան փաստաթղթերով:
- 6.3. Ապահովագրական գումարը չի կարող գերազանցել Ապահովագրական արժեքը, հակառակ դեպքում Պայմանագիրն առոչինչ է Ապահովագրական արժեքը գերազանցող գումարի մասով:

**ԲԱԺԻՆ 7. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ, ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳ, ԶՎՃԱՐՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ**

- 7.1. Ապահովագրավճարը հաշվարկվում է Ապահովագրողի կողմից Պայմանագրի ողջ ժամկետի համար Ապահովագրական սակագնի հիման վրա, որը ձևավորվում է Բեռի տեսակից, փոխադրման երթուղուց, փոխադրման միջոցից, Ապահովադիր կողմից ընտրված ծածկույթից, Չհատուցվող գումարի տեսակից ու մեծությունից, ինչպես նաև ապահովագրական ռիսկի վրա ազդող այլ գործոններից:
- 7.2. Ապահովագրավճարն Ապահովադիր կողմից վճարվում է միանվագ, եթե Պայմանագրով այլ կարգ սահմանված չէ:
- 7.3. Եթե Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 14-օրյա ժամկետում Ապահովադիրը չի վճարում միանվագ կամ առաջին հերթական Ապահովագրավճարը, ապա Ապահովագրողն իրավունք ունի միակողմանի լուծելու Պայմանագիրը՝ համաձայն սույն Պայմանների 7.4 կետի, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:
- 7.4. Ապահովագրողն ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՀՐԱԺԱՐՎԵԼ ապահովագրական հատուցում իրականացնելուց, եթե Ապահովագրական ՊԱՏԱՀԱՐԻ ՊԱՀԻՆ ԱՊԱՀՈՎԱԴԻՐՆ Ապահովագրավճարի գծով Ապահովագրողի նկատմամբ ՈՒՆԻ ԺԱՄԿԵՏԱՆՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ:
- 7.5. Եթե Ապահովադիրը Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում չի վճարել Ապահովագրավճարը, ապա Ապահովագրողն իրավունք ունի Ապահովագրավճարի վճարման համար սահմանված ժամկետից 3 (երեք) օր հետո միակողմանի լուծելու Պայմանագիրը: Այս դեպքում Ապահովադիր կողմից Պայմանագրի համար վճարված Ապահովագրավճարը չի վերադարձվում:

**ԲԱԺԻՆ 8. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳ ԵՎ ԺԱՄԿԵՏ, ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԱՐԳ**

- 8.1. Պայմանագիրն Ապահովագրողի և Ապահովադիրի (այսուհետ՝ Կողմեր) միջև կնքված փաստաթուղթ է, ըստ որի Ապահովագրողն Ապահովագրավճարի դիմաց պարտավորվում է Պայմանագրով և Պայմաններով սահմանված կարգով Ապահովադիրին կամ Շահառուին տրամադրել ապահովագրական հատուցում:



- 8.2. Պայմանագիրը կնքվում է գրավոր՝ Ապահովադրի կողմից բանավոր կամ գրավոր դիմում-հարցաթերթիկի հիման վրա (բացառությամբ Պայմանների 8.3 կետում նշված դեպքի), որում պետք է պարունակվեն հետևյալ տեղեկությունները՝
  - 8.2.1. Ապահովադրի և Շահառուի մասին տվյալներ,
  - 8.2.2. Բեռն առաքողի և ստացողի մասին տվյալներ,
  - 8.2.3. Բեռի ստույգ անվանումը, արժեքը (ըստ Բեռի արժեքը հաստատող փաստաթղթերի), փաթեթավորման տեսակը, քանակությունը և քաշը,
  - 8.2.4. Բեռնափոխադրողի տվյալները,
  - 8.2.5. փոխադրող տրանսպորտային միջոցի տվյալները (վագոն, բեռնարկղ, նավ, ավտոմեքենա և այլն),
  - 8.2.6. Բեռի առաքման ձևը (տրանսպորտային բեռնարկղով, պարկերով, նավամբարում, տախտակամածի վրա դրված և այլն),
  - 8.2.7. Բեռի առաքման, փոխբեռնման և վերջնակետի տվյալները (երթուղին),
  - 8.2.8. Ապահովագրական արժեքը՝ նշելով Բեռի արժեքը, միջանկյալ ծախսերը և տրանսպորտային ծախսերը՝ առանձին-առանձին (եթե վերջիններս ապահովագրվելու են),
  - 8.2.9. Ապահովագրական գումարը,
  - 8.2.10. Պայմանագրի գործողության ժամկետը,
  - 8.2.11. Ապահովագրողի կողմից սահմանված այլ պայմաններ:
- 8.3. Պայմանագիրն անհրաժեշտության դեպքում կարող է կնքվել Ապահովադրի բանավոր դիմումի հիման վրա, պայմանով, որ Պայմանագրում ընդգրկվեն ապահովագրության դիմում-հարցաթերթիկի մեջ ներառվող տվյալները:
- 8.4. Պայմանագիրը կարող է կնքվել Կողմերի համաձայնությամբ առավելագույնը 60 (վաթսուն) օր ժամկետով, որը Կողմերի համաձայնությամբ կարող է երկարացվել Բեռնափոխադրման ձգձգման հետևանքով:
- 8.5. Ապահովադիրն իրավունք ունի Պայմանագիր կնքել երրորդ անձի (Շահառուի) օգտին:
- 8.6. Ապահովադիրն իրավունք ունի Պայմանագրում նշված Շահառուին փոխարինել այլ անձով՝ միայն Ապահովագրողին գրավոր տեղեկացնելու դեպքում: Երրորդ անձի օգտին Պայմանագրի կնքումն Ապահովադրին չի ազատում Պայմանագրով իրեն վերագրված պարտականությունների կատարումից, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:
- 8.7. Ապահովագրողն իրավասու չէ ապահովագրական հատուցում տրամադրել Ապահովադրին՝ առանց Շահառուի նախնական համաձայնությունը հավաստող փաստի, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:
- 8.8. Պայմանագրով սահմանված որևէ պարտավորություն կատարելուց կամ Ապահովագրողից ապահովագրական հատուցում պահանջելուց հետո Ապահովադիրը Շահառուին չի կարող փոխարինել այլ անձով:
- 8.9. Պայմանների համաձայն կնքվող Պայմանագրով ապահովագրությունն ուժի մեջ է մտնում այն պահից, երբ Բեռը դուրս է հանվում Պայմանագրում նշված պահեստից, տարածքից կամ պահեստավորման վայրից՝ տարանցիկ բեռնափոխադրման սկսման նպատակով, շարունակվում է տարանցիկ ուղու բնականոն ընթացքի տևողության ժամանակ և ավարտվում է ստորև սահմանված դեպքերից որևէ մեկի տեղի ունենալու դեպքում՝
  - 8.9.1. երբ Բեռը հասնում է Պայմանագրում նշված գնորդին (Բեռն ընդունողին)՝ վերջինիս պահեստ կամ այլ վայր.
  - 8.9.2. երբ Բեռը հասնում է Պայմանագրում նշված և Ապահովադրի կողմից ընտրված ցանկացած այլ վայր կամ պահեստ.
  - 8.9.3. երբ լրանում է Պայմանագրի գործողության ժամկետը.
  - 8.9.4. ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:
- 8.10. Եթե Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո որոշակի հանգամանքներից ելնելով փոխվում է փոխադրման նպատակակետը կամ երթուղին, ապա ապահովագրությունը շարունակվում է գործել



այն դեպքում, երբ Ապահովադիրը 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին գրավոր տեղեկացնում է Ապահովագրողին և վերջինս տալիս է իր համաձայնությունը: Այս դեպքում Ապահովագրավճարը և Պայմանները կարող են Ապահովագրողի կողմից վերանայվել:

- 8.11. Պայմանները կցվում են Պայմանագրին, հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը և պարտադիր են Կողմերի համար:
- 8.12. Պայմանագրի և Պայմանների միջև անհամապատասխանությունների դեպքում գերակա է Պայմանագիրը, իսկ դրանց թարգմանությունների տարընթերցման դեպքում նախապատվությունը տրվում է հայերեն տարբերակին:

**ԲԱԺԻՆ 9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**9.1. Ապահովադիրն իրավունք ունի՝**

- 9.1.1. Ապահովագրողից պահանջել պետական գրանցումը և գործունեության թույլտվությունը հավաստող փաստաթղթերը (պետական գրանցման վկայական, լիցենզիա),
- 9.1.2. Ապահովագրողի հետ իր հարաբերություններն իրականացնել ապահովագրական միջնորդի (բրոքեր կամ գործակալ) միջոցով,
- 9.1.3. Պայմանագրով նախատեսված դեպքերում ստանալ ապահովագրական հատուցում,
- 9.1.4. Պայմանագիրը կորցնելու դեպքում Ապահովագրողից ստանալ դրա կրկնօրինակը,
- 9.1.5. Պայմաններով սահմանված կարգով վաղաժամկետ լուծել Պայմանագիրը,
- 9.1.6. Պայմանագրում նշված ապահովագրության ժամկետում բեռը հասցեատիրոջը (Պայմանագրով նախատեսված վայր) չհասնելու դեպքում նախքան Պայմանագրի ժամկետի ավարտն այդ մասին տեղյակ պահել Ապահովագրողին ապահովագրության ժամկետը երկարացնելու նկատառումով:
- 9.1.7. իրականացնել Պայմաններով, Պայմանագրով, ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված և (կամ) չարգելված այլ գործողություններ:

**9.2. Ապահովադիրը պարտավոր է՝**

- 9.2.1. Ապահովագրողին ՀԱՅՏՆԵԼ Բեռի գծով առկա այլ ապահովագրության պայմանագրերի (վկայագրերի) մասին,
- 9.2.2. Պայմանագրում նշված ԿԱՐԳՈՎ և ԺԱՄԿԵՏՈՒՄ ՎՃԱՐԵԼ Ապահովագրավճարը,
- 9.2.3. Պայմանագրի կնքման ժամանակ և դրա գործողության ընթացքում Ապահովագրողին ՀԱՅՏՆԵԼ ապահովագրական ՌԻՍԿԻ ԳՆԱՀԱՍՄԱՆ ՀԱՄԱՐ էական նշանակություն ունեցող՝ իրեն հայտնի բոլոր ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ,
- 9.2.4. ՊԱՀՊԱՆԵԼ Բեռի ՀՀ օրենսդրությամբ սահմանված անվտանգության ՆՈՐՄԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ,
- 9.2.5. ԸՆՁԵՌԵԼ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ Ապահովագրողի ներկայացուցչի կողմից Բեռի ուսումնասիրություն իրականացնելու համար, պատահարի առաջացման դեպքում ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻԶՈՑՆԵՐ ՁԵՌՆԱՐԿԵԼ վնասի կանխման կամ նվազեցման ուղղությամբ,
- 9.2.6. ԸՆՁԵՌԵԼ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ Ապահովագրողի ներկայացուցչի կողմից պատահարի պատճառների ուսումնասիրություն և վնասի չափը գնահատում իրականացնելու համար, ,
- 9.2.7. ԿԱՏԱՐԵԼ ՀՀ օրենսդրությամբ, Պայմաններով և Պայմանագրով իրեն վերապահված ԱՅԼ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ:

**9.3. Ապահովագրողն իրավունք ունի՝**

- 9.3.1. Ապահովագրական ռիսկի գնահատման նպատակով ուսումնասիրել ապահովագրության օբյեկտը, անհրաժեշտության դեպքում նշանակել փորձաքննություն՝ դրա իրական արժեքը պարզելու նպատակով,
- 9.3.2. գնել և ուսումնասիրել պատահարի հետևանքով վնասված Բեռը, փորձաքննություն կատարել վնասի առաջացման պատճառների և հետևանքների բացահայտման ուղղությամբ,
- 9.3.3. Ապահովադիրի հետ իր հարաբերություններն իրականացնել ապահովագրական բրոքերի կամ ապահովագրական գործակալի միջոցով,



- 9.3.4. հարցումով դիմել համապատասխան լիազոր (իրավասու) մարմիններ պատահարի տեղի ունենալու փաստը և պատճառները հաստատող փաստաթղթեր կամ այլ տեղեկությունները ստանալու նպատակով,
- 9.3.5. ապահովագրական հատուցման, հատուցման նվազեցման, ինչպես նաև մերժման վերաբերյալ որոշում կայացնելու համար կասեցնել կամ երկարաձգել այդ գործընթացը, միայն այն դեպքում, եթե ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնց պատճառով Ապահովագրողն անհրաժեշտ է համարում ստանալ հավելյալ տեղեկություն պատահարի վերաբերյալ՝ այդ մասին գրավոր ծանուցելով Ապահովադրին (Շահառուին),
- 9.3.6. Պայմանագրի կնքման ժամանակ Ապահովադրից պահանջել ապահովագրվող բեռի և դրա բարձրման ընթացքի զննում իրականացնելու հնարավորության ապահովում: Այդ դեպքում Ապահովագրողն Ապահովադրի հետ համաձայնեցնում է զննում անցկացնելու հետ կապված խնդիրները, այդ թվում զննում անցկացնելու ամսաթիվը, ժամը և տեղը,
- 9.3.7. Ապահովադրից պահանջել տրամադրել լրացուցիչ տեղեկություններ, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն կարող են որոշակի ազդեցություն ունենալ Ապահովագրողի կողմից պատահարի ուսումնասիրության, դրա տեղի ունենալու հավանականության և դրա հետևանքով հնարավոր վնասների չափերի կանխորոշման վրա,
- 9.3.8. մերժել ապահովագրական հատուցման իրականացումը, եթե Շահագրգիռ անձը չի կատարել կամ ոչ պատշաճ է կատարել սույն Պայմաններով սահմանված իր պարտավորությունները:
- 9.3.9. իրականացնել Պայմաններով, Պայմանագրով, ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված կամ չարգելված այլ գործառնություններ:

**9.4. Ապահովագրողը պարտավոր է՝**

- 9.4.1. Ապահովադրին ծանոթացնել Պայմաններին և տրամադրել դրա օրինակը,
- 9.4.2. Պայմանագրով և Պայմաններով սահմանված դեպքերում և կարգով իրականացնել ապահովագրական հատուցում,
- 9.4.3. հատուցել Ապահովագրողի ցուցումներին համապատասխան կատարված Ապահովադրի այն ծախսերը, որոնք ողջամտության սահմաններում կատարվել են Ապահովագրական պատահարի արդյունքում վնասների կանխման կամ նվազեցման նպատակով:

**9.5. ԿՈՂՄԵՐԸ ՊԱՐՏԱՎՈՐ ԵՆ՝**

- 9.5.1. չիրապարակել, չբացահայտել և այլ անձին չտրամադրել իրենց հայտնի դարձած բժշկական, ֆինանսական և ապահովագրական գաղտնիք հանդիսացող կամպարունակող ցանկացած տեսակի տեղեկություն՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի, և իրենց հայտնի դարձած տեղեկությունը չօգտագործել սեփական կամ այլ անձանց շահերին կամ միմյանց տնտեսական դիրքին վնաս հասցնելու համար,
- 9.5.2. կատարել ՀՀ օրենսդրությամբ, Պայմաններով և Պայմանագրով իրենց վերապահված այլ պարտականություններ:

**ԲԱԺԻՆ 10. ԿՈՂՄԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ**

10.1. Պատահարի տեղի ունենալու դեպքում Ապահովադիրը և (կամ) Շահառուն ՊԱՐՏԱՎՈՐ ԵՆ.

10.1.1. Ապահովագրական պատահարի մասին ԱՆՀԱՊԱՂ (ԱՌԱԶԻՆ ԻՍԿ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ) Պայմանագրում նշված հեռախոսահամարով տեղյակ պահել Ապահովագրողին, իսկ պատահարը տեղի ունենալուց հետո ՈՉ ՈՒՇ, ՔԱՆ 3 (ԵՐԵՔ) ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ այդ մասին գրավոր տեղեկացնել Ապահովագրողին: Սույն ենթակետի առաջին մասով նախատեսված պարտականությունը չկատարելու դեպքում Ապահովագրողն ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՉՎՃԱՐԵԼՈՒ ապահովագրական հատուցում, եթե չապացուցվի, որ նա ժամանակին իմացել է Ապահովագրական պատահարի վրա հասնելու մասին կամ, որ այդ մասին Ապահովագրողի մոտ տեղեկությունների բացակայությունը չէր կարող ազդել ապահովագրական հատուցում վճարելու նրա պարտականության վրա: Սահմանված ժամկետում Ապահովագրողին ԳՐԱՎՈՐ





ՉՏԵՂԵԿԱՑՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ Ապահովագրողն ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ԶՎՃԱՐԵԼ ապահովագրական հատուցում՝ բացառությամբ այն դեպքի, երբ Ապահովադիրը կամ Շահառուն ապացուցում են տեղեկացնելու անհնարինությունը:

- 10.1.2. Ապահովագրական պատահարի մասին ԱՆՀԱՊԱՂ (ԱՌԱՋԻՆ ԻՍԿ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ) հայտնել համապատասխան իրավասու մարմնին (Ոստիկանություն, հրշեջ ծառայություն և այլն) և ստանալ պատահարը և դրա տեղի ունենալու հանգամանքները հավաստող համապատասխան փաստաթղթեր՝ բացառությամբ այն դեպքի, երբ Ապահովագրողն Ապահովադիրին (Շահառուին) համապատասխան գրավոր փաստաթղթով ազատել է սույն ենթակետում նշված պարտականությունները կատարելուց,
- 10.1.3. Ապահովագրական պատահարի առաջացման դեպքում ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐ ՁԵՌՆԱՐԿԵԼ վնասի կանխման կամ նվազեցման ուղղությամբ՝ հետևելով Ապահովագրողի ցուցումներին,
- 10.1.4. հնարավորության սահմաններում ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ պատահարի մասնակիցների ինքնությունը և տվյալները (առկայության դեպքում) պարզելու նպատակով,
- 10.1.5. պատահարի առաջացման համար մեղավոր կողմից պատճառված վնասի (մի մասը կամ ամբողջությամբ) հատուցման դեպքում՝ այդ մասին ԱՆՄԻՋԱՊԵՍ ՏԵՂԵԿԱՑՆԵԼ Ապահովագրողին:

**ԲԱԺԻՆ 11. ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՀԱՆՋԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ**

- 11.1. Ապահովագրական հատուցումն իրականացվում է Ապահովագրողի կողմից Պայմաններին, Պայմանագրին, ՀՀ օրենսդրությանը համապատասխան:
- 11.2. Ապահովադիրն ապահովագրական հատուցում ստանալու նպատակով պետք է Ապահովագրողին ներկայացնի վերջինիս կողմից սահմանված ձևի գրավոր դիմում:
- 11.3. Պատահարի առաջացումից հետո Ապահովագրողն իրավունք ունի դիմելու անկախ փորձագետների՝ պատահարի պատճառները բացահայտելու կամ վնասի չափը ճշտելու համար, ինչպես նաև ապահովագրական հատուցման չափը որոշելիս հիմնվելու վերջիններիս եզրակացությունների վրա:
- 11.4. Ապահովագրողն իրավունք ունի անձամբ կամ իր ներկայացուցչի միջոցով հետաքննելու և պարզելու պատահարի հանգամանքները և պատճառները, ինչպես նաև ինքնուրույն կերպով՝ իր համապատասխան ներկայացուցչի (աշխատակցի) միջոցով գնահատելու պատահարի հետևանքով պատճառված վնասի չափը և դա հիմք ընդունելու ապահովագրական հատուցման չափի որոշման համար:
- 11.5. Վնասի չափը կարող է որոշվել Շահագրգիռ անձի մասնակցությամբ:
- 11.6. Ապահովագրողի և Ապահովադրի միջև անհամաձայնության դեպքում Պայմանագրի կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի պահանջել, որպեսզի վնասի չափը որոշվի անկախ փորձագետի կողմից: Այս դեպքում փորձաքննության ծախսերն իրականացվում են այդպիսի պահանջ ներկայացնողի հաշվին:
- 11.7. Ապահովագրական հատուցում ստանալու պահանջի դեպքում Ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է փաստաթղթերով ապացուցել, որ
  - 11.7.1. պատահարը հանդիսանում է Ապահովագրական,
  - 11.7.2. պատահարը տեղի ունենալու պահի դրությամբ ունեցել է Բեռի պահպանման շահ,
  - 11.7.3. ապահովագրական հատուցում ստանալու չափի իր պահանջը համապատասխանում է պատճառված (կրած) վնասին:
- 11.8. Պայմաններին 11.7 կետում նշված փաստաթղթերն են՝
  - 11.8.1. ապահովագրված Բեռի նկատմամբ պահպանման շահի առկայության ապացուցման համար՝ նավաբեռնագրեր, երկաթուղային բեռնագրեր կամ այլ փոխադրական փաստաթղթեր, հաշիվ ապրանքագրեր և այլ հաշիվներ, որոնց համաձայն Ապահովադիրը (Շահառուն) պատահարը տեղի ունենալու պահի դրությամբ Բեռի նկատմամբ ունեցել է տնօրինման իրավունք,



- 11.8.2. Ապահովագրական պատահարի առկայության ապացուցման համար՝ համապատասխան լիազորված մարմնի կողմից հաստատված փաստաթղթեր և այլ պաշտոնական ակտեր, որտեղ նշված կլինեն պատահարի տեղի ունենալու փաստը և պատճառները: Փոխադրամիջոցի անհայտ կորստի դեպքում փոխադրամիջոցի դուրս գալու ժամկետի մասին վկայություն, ինչպես նաև վկայություն, որ փոխադրամիջոցը չի հասել նշանակման կամ Պայմանագրում նշված համապատասխան վայր,.
- 11.8.3. կրած վնասի պահանջի համապատասխանության ապացուցման համար՝ փորձաքննության կամ վնասի գնահատման ակտեր, վնասի չափի վերաբերյալ փաստաթղթեր կամ վնասի չափը հավաստող այլ փաստաթղթեր:
- 11.9. Եթե Բեռը ստուգողը (կամ ստացողը) ստանալու պահին գրավոր կերպով բեռնափոխադրողին չի տեղեկացնում Բեռի պակասի կամ վնասի մասին, ապա համարվում է, որ Բեռը ստացվել է փոխադրման պայմանագրի պայմաններին համաձայն: Եթե Բեռը ստանալուց հայտնաբերվում է Բեռի պակաս կամ վնասվածք, ապա այդ մասին 2 (ԵՐԿՈՒ) ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԿԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ գրավոր կերպով պետք է տեղեկացվի փոխադրողին կամ Ապահովադրին (Շահառուին): Եթե սույն կետում նշված ժամանակահատվածում Բեռնափոխադրողին կամ Ապահովադրին (Շահառուին) վնասի վերաբերյալ ՏԵՂՅԱԿ ՉԻ ՊԱՀՎԵԼ, ապա այդ հանգամանքը Ապահովագրողի համար ԿԱՐՈՂ Է ապահովագրական ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՆԱԼ:
- 11.10. Պայմանագրում նշված ապահովագրության տարածքում Պայմանների և Պայմանագրի համաձայն, եթե Բեռը ապահովագրված է լրիվ արժեքով Ապահովագրողը Բեռի ամբողջական կորուստի դեպքում իրականացնում է ապահովագրական հատուցում ամբողջ Ապահովագրական գումարի չափով, իսկ Բեռին պատճառված ոչ ամբողջական կորուստի կամ վնասի դեպքում՝ փաստացի վնասի չափով, բայց ոչ ավել քան Ապահովագրական գումարի չափը:
- 11.11. Բեռի ոչ լրիվ արժեքով ապահովագրության դեպքում, Ապահովագրողն իրականացնում է վնասի հատուցումն այն համամասնությամբ, որը գոյություն ունի Ապահովագրական գումարի և Ապահովագրական արժեքի միջև:
- 11.12. Ապահովագրական հատուցում իրականացնելիս Ապահովագրողը հաշվի է առնում Պայմանագրով նախատեսված Չհատուցվող գումարը (առկայության դեպքում):
- 11.13. Եթե Պայմանների համաձայն ապահովագրական հատուցման պահանջի ժամանակ գոյություն ունի այլ ապահովագրության պայմանագիր, որով հատուցվում է նույն կորուստը, վնասը կամ պատասխանատվությունը, ապա Ապահովագրողը վճարում է ապահովագրական հատուցում հատուցվող ընդհանուր վնասի մեջ իր բաժնի չափով:
- 11.14. Ապահովագրողը, Ապահովադրի (Շահառուի) կողմից պատահարին առնչվող և սույն Պայմաններով սահմանված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում կազմում է պատճառաբանված որոշում ապահովագրական հատուցում իրականացնելու կամ այն մերժելու վերաբերյալ, իսկ որոշում կազմելուց հետո այդ որոշումն առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում առձեռն, էլեկտրոնային տարբերակով կամ փոստային ծառայության միջոցով տրամադրում է Ապահովադրին (Շահառուին):
- 11.15. Ապահովագրողն ապահովագրական հատուցումը վճարում է ապահովագրական հատուցում տրամադրելու մասին որոշում կայացնելու օրվանից հետո 20 (քսան) աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ապահովագրողը և Շահառուն ապահովագրական հատուցման վճարման այլ կարգ կամ ժամկետ չեն համաձայնեցրել:
- 11.16. Ապահովագրական հատուցման վճարումը կարող է հետաձգվել, եթե պատահարի հետ կապված հարուցվել է քրեական գործ, ինչպես նաև Պայմաններով, Պայմանագրով կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում:
- 11.17. Մինչև Ապահովագրողի կողմից ապահովագրված Բեռը՝ գողության պատճառով մշտապես կորած դիտելը, այն պետք է ոստիկանության կողմից վավերացվի որպես կորած: Եթե հետագայում Բեռը



գտնվում է, Ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է այդ մասին անհապաղ տեղեկացնել Ապահովագրողին:

- 11.18. Տրանսպորտային միջոցը համարվում է անհայտ կորած, եթե այն չի ժամանել նշանակման վայր նախատեսված ժամկետից հետո 60 (վաթսուն) օրվա ընթացքում և վնասի (կորստի) հատուցման համար հայցով դիմելու պահին դրա մասին ոչ մի տեղեկություն չի ստացվել:
- 11.19. Եթե տեղեկատվության ստանալուն խոչընդոտ են հանդիսանում պատերազմը, ռազմական գործողությունը, քաղաքացիական պատերազմը կամ հասարակական խռովությունը, ապա Բեռը կորած համարելու ժամանակը երկարաձգվում է, բայց ոչ ավել քան 6 (վեց) ամիս:
- 11.20. Ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է պատահարին առնչվող և Պայմաններով սահմանված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնել Ապահովագրողին գրավոր դիմում ներկայացնելու օրվանից 3 (երեք) ամսվա ընթացքում:
- 11.21. Պայմանների 11.20 կետով սահմանված ժամկետում Ապահովադիր (Շահառուի) կողմից Պայմաններով սահմանված փաստաթղթերը կամ սահմանված եռամսյա ժամկետը երկարաձգելու մասին գրավոր որևէ միջնորդություն չներկայացնելու դեպքում, Ապահովագրողը, Պայմանների համաձայն, Ապահովադիր կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով մերժում է ապահովագրական հատուցման վճարումը սույն կետում սահմանված ժամկետը լրանալուց հետո հնգօրյա ժամկետում:
- 11.22. Այն դեպքում, երբ Ապահովադիրը գրավոր միջնորդություն է ներկայացնում փաստաթղթերի ներկայացման խոչընդոտների կամ այլ պատճառաբանությամբ սահմանված ժամկետը երկարացնելու մասին, ապա Ապահովագրողը, ելնելով տվյալ գործի հանգամանքներից, կարող է այդ ժամկետը երկարաձգել մինչև 6 (վեց) ամիս ժամկետով: Նշված ժամկետում Ապահովադիր կողմից սահմանված պարտավորության չկատարման հետևանքները նույնանում են Պայմանների 11.21 կետով սահմանված դրույթների հետ:

**ԲԱԺԻՆ 12. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԿԱՐԳ**

- 12.1. Պայմանագիրը վաղաժամկետ դադարում է.
  - 12.1.1. եթե վերացել է Ապահովագրական պատահարի տեղի ունենալու հավանականությունը, և ապահովագրական ռիսկի գոյությունը դադարել է Ապահովագրական պատահարից տարբեր այլ հանգամանքների բերումով,
  - 12.1.2. եթե Ապահովագրողի կողմից կատարվել են Պայմանագրով նախատեսված իր բոլոր պարտավորությունները,
  - 12.1.3. ՀՀ օրենսդրությամբ, Պայմաններով կամ Պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:
- 12.2. Ապահովագրողի պահանջով Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովադիրին է վերադարձվում Ապահովագրավճարն ամբողջությամբ՝ բացառությամբ Պայմանագրով և Պայմաններով նախատեսված դեպքերի:
- 12.3. Պայմանագրի գործողության մեջ մտնելուց հետո Ապահովադիր կողմից Պայմանագրից հրաժարվելու դեպքում Ապահովագրողին վճարված ապահովագրավճարները վերադարձման ենթակա չեն:
- 12.4. Ապահովադիր կողմից մինչև ապահովագրության ժամկետի գործողության մեջ մտնելը Պայմանագրից հրաժարվելու դեպքում Ապահովագրողին վճարված ապահովագրավճարները ենթակա են վերադարձման վճարված ապահովագրավճարի 80 (ութսուն) %-ի չափով:
- 12.5. Պայմանագիրն առաջին կամ անվավեր է համարվում ՀՀ օրենսդրությամբ, Պայմաններով կամ Պայմանագրով նախատեսված դեպքերում և կարգով:

**ԲԱԺԻՆ 13. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀՍՏՈՒՑՄԱՆ ՀԵՏ ՊԱՀԱՆՁԻ ԻՐԱՎՈՒՆՔ (ՍՈՒԲՐՈԳՍՅՈՒՄ)**

- 13.1. Ապահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում Ապահովադիրին պատճառված վնասից բխող նրա (Ապահովադիր, Շահառուի) պահանջի իրավունքը վնասը պատճառած անձի նկատմամբ անցնում է Ապահովագրողին՝ իր կողմից հատուցված գումարի մասով, եթե Պայմանագրով այլ բան



նախատեսված չէ: Դիտավորյալ վնաս պատճառած անձի նկատմամբ պահանջի իրավունքն Ապահովագրողին անցնելը բացառող ՊԱՐՏԱՎՈՐ Է Ապահովագրողին փոխանցել բոլոր փաստաթղթերը և ապացույցները, ինչպես նաև տրամադրել իրեն հայտնի բոլոր տվյալները, որոնք անհրաժեշտ են Ապահովագրողին սուբրոգացիա իրականացնելու համար:

13.2. Ապահովադիրը (Շահառուն) ՊԱՐՏԱՎՈՐ Է Ապահովագրողին փոխանցել բոլոր փաստաթղթերը և ապացույցները, ինչպես նաև տրամադրել իրեն հայտնի բոլոր տվյալները, որոնք անհրաժեշտ են Ապահովագրողին սուբրոգացիա իրականացնելու համար:

13.3. Եթե Ապահովադիրը (Շահառուն) ՀՐԱԺԱՐՎԵԼ Է Ապահովագրողի կողմից հատուցված կամ հատուցվելիք վնասների համար պատասխանատու անձի նկատմամբ ՊԱՀԱՆՁԻ ԻՐ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ կամ այդ իրավունքի իրականացումը ԱՆՀՆԱՐԻՆ Է ԴԱՐՁԵԼ Ապահովադրի (Շահառուի) մեղքով, ապա Ապահովագրողը լրիվ կամ համապատասխան չափով ԱԶՍՏՎՈՒՄ Է ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՎՃԱՐԵԼՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԻՑ, իսկ ապահովագրական հատուցումն արդեն վճարված լինելու դեպքում՝ Ապահովագրողն իրավունք ունի պահանջել Ապահովադրից (Շահառուից) վերադարձնել վճարված ապահովագրական հատուցման գումարը:

**ԲԱԺԻՆ 14. ԱԲԱՆԴՈՆ**

14.1. Աբանդոնը թույլատրվում է միայն այն դեպքում, երբ ապահովագրության օբյեկտը (ներառյալ տրանսպորտային միջոցը) անհնար է լիարժեք վստահությամբ համարել կորած, կամ ապահովագրված Բեռի վնասի վերականգնման ծախսերը տնտեսապես աննպատակահարմար են: Ապահովադրի կողմից ապահովագրված Բեռի՝ իր իրավունքներից հրաժարվելը նպատակ է հետապնդում, որպես ապահովագրական հատուցում ստանալ ողջ Ապահովագրական գումարը: Աբանդոնի դեպքում Ապահովագրողն իրավունք ունի, բայց պարտավոր չէ վճարել ամբողջ Ապահովագրական գումարը, հետևյալ դեպքերում՝

- 14.1.1. Բեռի՝ Բեռնափոխադրման միջոցների հետ մեկտեղ կորստի,
- 14.1.2. Բեռի լրիվ անպիտանելի դառնալու,
- 14.1.3. Բեռին հասցված վնասների շտկման աննպատակահարմարության դեպքում (եթե վնասների վերականգնման ծախսերը գերազանցում են Ապահովագրական գումարի 75%-ը),
- 14.1.4. Եթե ժողովրդական հուզումների կամ ահաբեկչական գործողությունների հետևանքով Բեռը զավթվել է և զավթումը տևում է 60 (վաթսուն) օրից ավելի (եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ):

14.2. Աբանդոնի վերաբերյալ ԴԻՄՈՒՄԸ Ապահովագրողին ՊԵՏՔ Է ՆԵՐՎԱՅԱՑՎԻ 14.1.1-14.1.4 ենթակետերում նշված դեպքերի մեկնարկից 6 (ՎԵՅ) ԱՄՄՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ: Եթե Ապահովագրական հատուցումը ստանալուց հետո հայտնաբերվի, որ Բեռը չի վնասվել, ապա Ապահովագրողը կարող է ետ պահանջել վճարված Ապահովագրական հատուցումը՝ մասնակի վնասի հատուցման պայմանով, եթե այդպիսին առկա է:

14.3. Աբանդոնի դիմումը չի կարող ետ վերցվել:

**ԲԱԺԻՆ 15. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳ**

15.1. Պայմանագրի գործողության ընթացքում առաջացող բոլոր վեճերը լուծվում են Կողմերի միջև անմիջական բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը կարող են լուծվել Ֆինանսական համակարգի հաշտարարին դիմելու միջոցով կամ դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համաձայն:

15.2. Վեճերի առաջացման դեպքում Պայմաններով չկարգավորված հարցերը կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: